25.918

Գրքեթաքրներ բոլոր յերկրների, միացեք

ԱՐՄ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՍՊԱՌԿՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՇՎԵՏՈՒ - ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ,,ՀԱՅԿՈՊՈՊ''-Ի ՅԵՐԵՎԱՆ 1930 Թ.

334.5
Դ-17

25.918

28 MAR 2013
334.5
Դ-17
ար

15 JAN 2010

Պրոլետարներ բոլոր յերկրներից, միացեք

ԱՐՄ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՍՊԱՌԿՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՇՎԵՏՈՒ - ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԵԼԱՆԻԿՅԱՆԻ
Публичная Библ...

ՀՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ „ՀԱՅԿՈՒՄ"-Ի ՅԵՐԵՎԱՆ 1930 Թ.

14919-57

ՀԱՅԿՈՈՊԻ ՏՊԱՐԱՆ
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 5165բ.
ՏԻՐԱԺ 1000 Պ. 167

ԱՊԱՌԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1· Սպառկոոպերացիայի նվաճումներն ու բացերը

Տարեց տարի աճում ու մեծանում է սպառկոոպերացիայի դերը շուկայի, բանվորի ու գյուղացու բյուջեյի ընդարձակման ասպարիզում։ Սպառկոոպերացիան արդեն իսկ միակ ապարատն է հանդիսանում աղքաբնակությանը մթերքներով և առաջին անհրաժեշտության ապրանքներով մատակարարելու բնագավառում, իսկ սպառկոոպերացիայի ընդհանուր դերը գյուղական ապրանքաշրջանառության մեջ հասել է այդ շրջանառության ութսուն տոկոսին։

Սպառկոոպերացիան գյուղական ցանցում կոոպերացման է յենթարկել անտեսությունների 86%-ը, իսկ շատ շրջաններում ու առանձին կոոպերատիվներում այդ տոկոսը հասել է մինչև 100%-ի։

Վոչ պակաս նվաճումներ ունի սպառկոոպերացիան փայավճարների գանձման ասպարիզում։

Առ 1/X ի 1928 թ. գանձված փայավճարների գումարը կազմում եր 730.731 ռուբլի, իսկ առ 16/III-ի 1930 թ. այդ գումարը հասել է 2.028.000 ռուբլու, կամ աճել է 178 տոկոսով։ Առ 1/X-ի 1928 թ. անդամ-

ների թիվը կազմում էր 109.962, իսկ առ 16/III-ի 1930 թ. դառել է 182.900. ավելացել են 72.928 նոր անդամներ կամ աճել է 66,3 տոկոսով։

Սպառողական կոոպերացիայի առևտրական շրջանառությունը 1928-1929 տ. տարում կազմում է 37.166.000 ռուբլի իսկ 1929-1930 տնտ. տարում նախատեսված է 4.800.000 ռուբլի։

Բոլոր նվաճումներ ունի սպառողական կոոպերացիան նաև կուլտ-կրթական ու մասսայական աշխատանքների՝ գյուղի կինոֆիկացիայի, ռադիո-ֆիկացիայի և գրքի տարածման ընդլայնումներում։

Անվիճելի և խոշոր նվաճումների հետ միասին, սպառողական կոոպերացիան ունի մոչ պակաս խոշոր թերություններ ու բացեր։

Հիմնական բացը կայանում է կոոպերատիվ հասարակայնության թույլ զարգացմամբ և շատ տեղերում նույն իսկ խպառ բացակայությամբ։ Այդ թերության հետ է կապված և մեծ մասամբ դրանից է բղխում այն մի շարք լուրջ թերությունները, որոնք կանգնած են սպառողական կոոպերացիայի նորմալ աճման ու զարգացման ճանապարհի վրա։ Սրան պիտի վերագրել առաջին հերթին կոոպերատիվ ապարատի կուլտակային քայքայված ու աշխատանքի համար միանգամայն անպետք ելեմենտներով ապատովելը, յուրացումների, զեղծարարությունների, ու չարաշահությունների մոչ թե նվազումը այլ նույնիսկ աճումը։

Թերությունների թվին է պատկանում նաև շրջանառության համար անհրաժեշտ սեփական միջոցների պակասությունը։

Բոլոր այդ թերություններն ու աչքի ընկնող

բացերը հաճախ բարդացնում ու դժվարացնում են կոոպերատիվ աշխատանքները, կտրում են բատրակ-չքավորական ու միջակային մասսայի հավատը դեպի կոոպերացիան և թուլացնում կոոպերատիվ աշխատանքների ընդհանուր թափն ու հաջողությունները։

2. Հաշվետու-վերընտրական կամպանիան կոոպերատիվ աշխատանքների ստուգատեսն է

Գյուղական ցանցում յուրաքանչյուր տարի տեղի ունեցող հաշվետու-վերընտրական կամպանիան մեծ նշանակություն է ստանում հենց նրանով, որ այդ ժողովների հետ է կապվում կոոպերատիվի աշխատանքների իսկական և լայն ստուգատեսը։

Բոլոր փայատերերը ուշադիր կերպով ստուգում ու պարզում են իրենց կոոպերատիվի բոլոր տեսակի բացերն ու թերությունները, տալիս են իրենց ընտրովի մարմինների աշխատանքների գնահատականը և առաջ քաշում վարչության վերատուգիչ հանձնաժողովի մեջ լավագույն ու հարազատ ընկերների։

3) Ներկա տարվա հաշվետու-վերընտրական կամպանիայի առանձին նշանակությունը

Ներկա տարվա հաշվետու-վերընտրական կամպանիան ունի բացառիկ նշանակություն։ Այդ բացառիկ նշանակությունը բնորոշվում է մի շարք պայմաններով։ Ամենից առաջ հաշվետու-կամպանիան ընթանալու է դասակարգային պայքարի սրմամբ՝ գյուղում։

Կուլակը, նախկին առևտրականը, վաշխառուն, տերտերն ու հակահեղափոխականը դեպի Խորհրդային իշխանությունը թշնամորեն տրամադրված այդ բոլոր ելեմենտները, անշուշտ ձեռք կառնեն բոլոր տեսակի խորամանկ միջոցները, վորպեսզի մեծացրած լինեն մեր դժվարությունները և այդ դժվարությունների սպեկուլյացիայի միջոցով կարողանան իրենց կողմը քաշել միջակին և նույնիսկ առանձին անգիտակից ու իր շահը չհասկացող չքավորին, վերջիններիս միջոցով ունենալու իրենց ազդեցությունը կոոպերացիայի վրա և նստացնելու «իրենց մարդկանց»։ Մեր բոլոր տեսակի տնտեսական դժվարությունների վրայի հիմնելու իր խորամանկ խաղը թե կուլակը, թե սպեկուլյանտը և թե հակախորհրդային ելեմենտը։ Ցեվ հենց դրա համար է, վոր մեր կոոպ. վարչությունները պետք է պարզաբանեն ու հասկացնեն աշխատավոր մասսային, վոր մեր տնտեսական դժվարությունները հանդիսանում են վոչ թե տընտեսության անկման, այլ խոշոր չափերով աճման դժվարություններ։ Արդյունաբերության մի շարք ընագավառներում մենք արդեն վաղուց անցել ենք մինչ պատերազմյան ստիճանը։ Ցուրաքանչյուր տարի մենք նոր ու նոր ներդրումներ ենք կատարում խոշոր ֆաբրիկաների ու գործարանների շինարարության մեջ, մենք ունենք խոշոր հաակացումներ կոլեկտիվ շինարարության և գյուղատնտեսության նոր ու կատարելագործված ձևերին անցնելու ուղղությամբ։ Բայց և այնպես մենք դեռ ապրում ենք վորոշ դժվարություններ։

Ինչումն է բանը։

Բանը նրանումն է, վոր ավելի արագ քան արդյունաբերությունը և ելի արագ քան գյուղատնտեսությունը, աճում է ազգաբնակության սպառողական պահանջները։

Այդ պահանջների աճումն իր հերթին հիմնավորվում է բանվոր դասակարգի ու գյուղացիության նյութական բարորության բարձրացմամբ։ Ահա հենց սպառողական պահանջների անհամաչափ բարձրացումը գյուղատնտեսության ու արդյունաբերության բարձրացման համեմատությամբ, առաջացնում է մեր վողջ դժվարությունները։

Խորհրդային իշխանությունը բոլոր վճռական միջոցները ձեռք է առնում, վորպեսզի մեղմի ապրանքային սովը, վորպեսզի խսպառ վերացնի ապրանքային պակասը և անհրաժեշտ մթերքների բացը։

Ցերկու ճանապարհ կար տնտեսական դժվարությունից դուրս գալու համար։

Առաջինը կայանում է նրանում, վոր պետական միջոցների հիմնական մասը ներդրվի թեթև արդյունաբերության մեջ՝ այսինքն արդյունաբերական այնպիսի ճյուղերում, վորոնք տալու են մասսայական լայն գործածության ապրանքներ, այսինքն մանուֆակտուրա, կոշկեղեն, ապակեղեն, պատրաստի հագուստ և այլն։ Նման պարագաներում անհրաժեշտ է մեզ, ստանալ արտասահմանից գործարանային վորոշ սարքավորում, հումույթ և այլն։

Այդ բոլորը արտասահմանից ձեռք բերելու և գնելու համար—հարկավոր է վոսկի, հարկավոր է գյուղատնտեսական մթերքների արտահանում։ Այդ կերպ վարվելով զուցե մենք կարողանայինք մի քա-

նի ամսից կամ մեկ-երկու տարուց հետո վերացնել ապրանքային սովը, բայց հետագայում ավելի մեծ դժվարությունների մեջ ընկնելու պայմանով։ Մենք ավելի քան մեծ դժվարությունների մեջ եյինք ընկնելու պարենավորման ապրանքների և գյուղատնտեսական նշանակություն ունեցող մթերքների բացակայության պատճառով։ Բացի դա, խանգարելու յեր մեր գործարանների ու ֆաբրիկանների նորմալ գործունեությանը և մենք անխուսափելի կախման մեջ պիտի լինեյինք արտասահմանյան կապիտալից։ Իսկ արտասահմանյան կապիտալիստները զգալով այդ, թելադրելու եյին իրենց ծանր ու անտանելի պայմանները։

Չերկրորդ և հիմնական ճանապարհը—վորն առաջին հայացքից ավելի դժվար է յերևում քան առաջինը, բայց վորը սակայն լիովին ապահովում է սոցիալիզմի կառուցումը մեր յերկրում, ազատում է մեզ արտասահմանյան կապիտալիզմի դիշատիչ ճիրաններից, դա ծանր արդյունաբերության զարգացումն և մեր յերկրում՝ հանքագործության զարգացումը, խոշոր ելեկտրականների, նոր ֆաբրիկանների ու գործարանների կառուցումը, վորոնք պետք է արտադրեյին գյուղատնտեսական գործիքներ, տրակտորներ և այլն։ Ահա այս յերկրորդ ուղին է, վոր ընտրել է մեր պետությունը։ առանց վորի մենք ի վիճակի չենք լինի ստեղծելու մեր սեփական արդյունաբերությունը, վերակառուցելու գյուղատնտեսությունը կոլեկտիվացման սոցիալիստական նոր հիմունքներով։ Ապրանքային ներկայիս դժվարություններից ազատվելու միակ ու ճիշտ ուղին, դա յերկրի

ինդուստրացումն է և խոշոր արդյունաբերության զարգացումը, վորին և դիմում է մեր սոցիալիստական հայրենիքը։

Սպառկոոպերացիան իր հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում պետք է պարզաբանի բոլոր տեսակի թերահավատներին—այդ բոլոր անցողիկ դժվարությունները և իր հստակ աշխատանքներով, ճկուն քաղաքականությամբ և համառ պայքարով՝ հանդեպ սպեկուլյանտներին ու կուլակությանը, ոժանդակի պետությանը սոցիալիստական վերակառուցման մեծ ու դժվարին գործում։

4. Պրոլետարական դասակարգային գծի ամրացումը սպառկոոպերացիայում

Գյուղի կուլակային ու հակախորհրդային ելեմենտների ուժեղացումը, պահանջում են մեղանից լարելու մեր ուշադրությունը սպառկոոպերացիայի պրոլետարական եյության հարցերի վրա։ Դրա համար անհրաժեշտ է մեր սպառկոոպներն ըստ իրենց եյության հանդիսանան չքավորա-միջակային։

Դրա համար անհրաժեշտ է ձգտել, վորպեսզի գըլխավին և լրիվ կերպով կոոպերացման յենթարկվեն բատրակ-չքավոր մասսան ու ամբողջովին ընդգրկվեն սպառկոոպերացիայի կողմից։

Սպառկոոպերացիայի հերթական ու ամենակարևոր խնդիրն է չքավորության ու բատրակների լրիվ կոոպերացումը վոչ ուշ քան մինչև 1930 թվի մարտի 1-ը։ Անմիջապես պետք է ուղղել այն բոլոր սխալներն ու աղավաղումները, վորոնք թույլ են տրվել մինչև

այժմս։ Խոշոր դեր ունեն կատարելու այս կամպանիայի ընթացքում չքավորական խմբակները։ Սպառկոոպերացիայի վարչությունների ամենահիմնական աշխատանքներից մեկը հանդիսանում է յուրաքանչյուր կոոպերատիվին կից բատրակ-չքավորական խմբակների կազմակերպումն ու նրանց աշխատանքներին տոն և ուղղություն տալը։

Վոչ պակաս այժմեական ու կարևոր խնդիր է նաև սպառկոոպերացիայի բռնելիք դիրքը՝ հանդեպ կոլեկտիվ տնտեսությունների։

Սպառկոոպերացիան իր բոլոր աշխատանքները պետք է համաձայնեցնի կոլխոզշինարարության խնդիրներին։ Այն մի շարք արտոնությունները, վոր տրված են կոլեկտիվ տնտեսություններին, պետք է ամեն կերպ ոգտագործել ու լրիվ կատարել՝ չքավորության լրիվ կոոպերացումը, ցածր փայ, բարձր նորմայով ապրանքներ տալը և այլն։

Սպառկոոպերացիայի ներկայիս ամենաառաջնակարգ խնդիրներից մեկը—դա խորհրդային տնտեսությունների սպասարկման գործն է։ Խորհրդային տընտեսությունների գյուղատնտեսության բանվորներին սպառկոոպերացիայի մեջ առնելը և նրանց սպասարկումը հաջող հիմքերի վրա դնելը՝ անհետաձգելի աշխատանքներից մեկն է։

Հաշվետու-վերընտրական կամպանիան սկսած չքավորության ու բատրակների խմբակից, պրոֆեսիոնալ միություններից, կանանց ու յերիտասարդության ժողովներից, պետք է հանդիսանան պրոլետարական դասակարգային դծի ամրացման հիմնական ոգակները։

5. Վնասական պայքար զեղծումների յեվ յուրացումների դեմ

Զեղծումներն ու յուրացումները՝ դրանք այն հիվանդագին պալարներն են, վոր գտնվում են կոոպերացիայի մարմնի վրա։

Զեղծումները քայքայում են սպառկոոպերացիան, թուլացնում նրան և հրում աշխատավոր մասսային կոոպերացիայից։

Չնայած այն ուժեղ պայքարին, վոր տանում է Խորհրդային իշխանությունն ու կոոպերացիան, այնու ամենայնիվ չի թուլանում սոցիալական այդ չարիքը։

Յուրացումների հիմնական պատճառներից մեկը դա փայատեր մասսայի անբավարար հսկողությունն է կոոպերատիվ աշխատանքներին և անբավարար չափով աշխատանքը՝ վերստուգիչ ու խանութային հանձնաժողովների կողմից։

Հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում փայատերերի ուշադրությունն առանձնապես պետք է կենտրոնանա զեղծումների, յուրացումների և չարաշահությունների դեմ պայքարելը։

Սպառկոոպերացիայում տեղ չպետք է ունենան զեղծարարները։ Ով յուրացնում է կոոպերատիվ կոպեկները, ով ոգնում է նրանց այդ գործում, ով հովանավորում է նրանց գործունեությունը, պետք է խիստ պատասխանատվության յենթարկվի պրոլետարական դատարանի կողմից։

Վերստուգիչ հանձնաժողովներին պետք է հանձնարարել անողոք պայքար մղելու նմանների հանդեպ և ուժեղացնելու սիստեմատիկ ստուգումները թե խանութներում և թե պահեստներում։

6. Լավացնել կոոպ ապարատը, մաքրել նրան կուլակներից, վնասարար ու խայխայված էլեմենտներից

Փորձը ցույց է տվել, որ զեղծումներն ու յուրացումները շատ են այն կոոպերատիվում, որտեղ բուն են դրել կուլակ, անհարազատ ու կոոպերացիայի համար անպետք տարրերը։ Այդ իսկ պատճառով, ըսպառկոոպերացիայի առաջ հարվածային խնդիր է դրված մաքրելու իր ապարատը բոլոր տեսակի ֆնասարար ու անհարազատ աշխատակիցներից։

Դրա համար անհրաժեշտ է վճռականորեն մաքրել կոոպերացիան կուլակային ու սպեկուլյանտ տարրերից և նրանց տեղը առաջ քաշել չքավոր ու բատրակ անդամներին, առաջ քաշել կանանցից ու յերիտասարդությունից թարմ ուլավագույն ուժեր՝ ոգտագործել ղեկավար պաշտոնների համար։

7. Ռացիոնալացման, ավելորդ ծախսերի կրճատման ու ցանցի խոշորացման միջոցով ավելի լավ նիմերի վրա դնել սպառողի սպասարկումը

Սպառկոոպերացիայի վողջ ցանցի առաջ հարվածային խնդիր է դրված բարելավելու առևտրի տեխնիկան, վերացնելու թափթփված ու ասիական ձևի առևտուրը, կանոնավորի ժող-սննդի կազմակերպումը և վերացնի հերթերն ու անտեղի պոչերը. իսկ դա հընարավոր է միմիայն ռացիոնալիզատորական ձեռնարկումների և ռացմինիմումի կիրառման մեթոդով։ Դրժբախտաբար պետք է ասել, որ այս ուղղությամբ մեր ցանցում համարյա վոչինչ չի արված։

Այդ իսկ պատճառով հաշվետու-վերընտրական կամպանիան ղեկավարող ընկերները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն աշխատանքի այս կարևոր բնագավառի վրա։ Անողոք ինքնաքննադատության միջոցով պետք է յերևան հանել այն բոլոր պատճառները, վորոնք ստիպ են ծառայել ռաց-մինիմումի անկատար մնալուն։

Ռացիոնալիզատորական ձեռնարկումների ու նրանց պարզացման վրա պետք է բեվեռել լայն մասսայի ուշադրությունը և մասնակից դարձնել նրան հետագա աշխատանքներին։

Սպառկոոպերացիան ռացիոնալիզատորական աշխատանքների հետ միաժամանակ պետք է վերանայի իր կոոպերատիվի կառուցվածքը, պետք է միացնել ու խոշորացնել այն բոլոր կոոպերատիվները, վորոնք խոշոր ծախքերի հետևանքով ծանր բեռ են դառնում կոոպերացված մասսային։ Դրա հետ զուգահեռ պետք է լայնացնել ու տարածել կոոպ. բաժանմունքները հեռավոր գյուղերում, ստեղծել բաշխիչներ ու կազմակերպել շրջիկ առևտրի գործը։ Պետք է պարզաբանել, վոր՝

1) Բաղմախանութ ու խոշոր կոոպերատիվը հնարավորություն ունի ավելի լավ կազմակերպելու կազմ մասսայական աշխատանքները։

2) Բաղմախանութային սիստեմը հնարավորություն է տալիս խոշոր չափով կրճատելու վերադիր ու առևտրական ծախքերն ու վերջինիս հետևանքով եժանացնել ապրանքը։

3) Բազմախանութային ձևը հնարավորություն է տալիս կենտրոնացնելու և մոբիլիզացիայի յենթարկելու ֆինանսական միջոցները ավանդների ու ավանսների ձևով։

Այս բոլոր խնդիրները հաշվետու վերընտրական կամպանիայի առանցքը պետք է կազմեն և ստեղծեն ամուր, դանդաղ ու դասակարգային իսկական կոալիցիա։

Ս. ՍԵՄԱՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная библиотека

«Ազգային գրադարան»
NL0203317

E 394